

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԲԱՑԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
ՊՐԱԿՏԻԿԱՅՈՒՄ

ԶԵԿՈՒՅՑ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ
XIV ՎԵՀԱԺՈՂՈՎՈՒՄ (Վիլնյուս, 3-6 հունիսի 2008թ.)

**Գ.Գ. Հարությունյան - ՀՀ սահմանադրական
դատարանի նախագահ**

Վեհաժողովի հարգարժան մասնակիցներ,
Հարգելի գործընկերներ,
Տիկնայք եւ պարոնայք,

Ես ցանկանում եմ նախ շնորհակալություն հայտնել Լիտվայի սահմանադրական դատարանին վեհաժողովի աշխատանքները բարձր մակարդակով կազմակերպելու համար: Շնորհակալություն եմ հայտնում նաեւ հիմնական զեկուցողներին՝ ազգային զեկույցները համակողմանի ուսումնասիրելու եւ թեման՝ իր ամբողջության մեջ, մեզ ներկայացնելու համար: Դա արվել է հմուտ եւ խոր գիտական մակարդակով:

Հայաստանի սահմանադրական դատարանը նույնպես՝ հետեւելով հարցաշարին, ներկայացրել է իր ծավալուն ազգային զեկույցը, որտում փորձ է արվել բոլոր առաջադրված հարցերին տալ հնարավոր սպառիչ պատասխաններ՝ ներկայացնելով նաեւ քննության առարկա թեմայի շրջանակներում մեր երկրում կուտակված փորձը: Ուստի ես շատ մանրամասների չեմ անդրադառնա, այլ մեր երկրի օրինակով շեշտադրումներ կանեմ մի քանի էական խնդիրների վերաբերյալ, որոնք բնորոշ են շատ երկրների:

Առաջին, սահմանադրական արդարադատության առնչություններն իրավական բացերի հիմնախնդրին առավել հրատապ է վերափոխվող համակարգերի համար, երբ իրավահարաբերությունների կանոնակարգվածության աստիճանը

բարձր չէ, առկա են օրենսդրական կարգավորման ներքին հակասություններ, անբավարար է հասարակական հարաբերությունների սահմանադրականացման աստիճանը, ցածր է սահմանադրական մշակույթի մակարդակը: Նման պայմաններում ցանկացած իրավական բաց կամ իրավանորմի անորոշություն դուռ է բացում սովերային հարաբերությունների համար, հանգեցնում իրավական արժեքների ձեւախեղման՝ իր բոլոր վտանգավոր հետեւանքներով հանդերձ: Ուստի առանձնահատուկ կարեւորության խնդիր է իրավական բացերի հիմնահարցի դրսեւորման առանձնահատկությունների վերլուծությունն անցումային իրավական համակարգերի համար, քանի որ նման բացերը տարաբնույթ ձեւով հանգեցնում են իրավական արժեքների որոշակի ձեւախեղումների: Օրինակ, մեր երկրում 2005թ. նոյեմբերի հանրաքվեով Սահմանադրությունը գրեթե երկու երրորդով փոփոխվեց: Անցումային դրույթներով նախատեսվեց, որ Ազգային ժողովը պետք է երկու տարում օրենսդրությունը համապատասխանեցնի վերափոխված Սահմանադրությանը: Երկու տարին ավարտվել է: Այդ ընթացքում տեղի է ունեցել երկու համապետական ընտրություն՝ խորհրդարանական եւ նախագահական: Երկրի օրենսդրությունը միայն մասնակիորեն է համապատասխանեցվել Սահմանադրությանը՝ 20-30 տոկոսով: Նույն այդ ժամանակահատվածում Ազգային ժողովի պատգամավորների 1/5-ը, կառավարությունը, դատավորները, տեղական ինքնակառավարման մարմինները նորմատիվ ակտերի սահմանադրականության հարցով ոչ մի դիմում չեն ներկայացրել սահմանադրական դատարան: Այսպիսի իրավիճակները վկայում են, որ մենք գործ ունենք ոչ միայն սովորական իրավական բացի, այլ սահմանադրաիրավական լուրջ բացի հետ, երբ Սահմանադրություն - օրենք - իրավակիրառական պրակտիկա եռմիասնական շղթայում դեֆորմացիաներ են առաջանում ու դրանք ժամանակի ընթացքում բնականոն ձեւով չեն հաղթահարվում:

Երկրորդ, առավել վտանգավոր է այն իրավիճակը, երբ օրենսդրական բացի հետեւանքով ձեւախեղված իրավական արժեքները վերարտադրվում են որպես մուտացված արժեքներ եւ մտնում են իրավական շրջանառության մեջ: Սա արդեն իրավական մետաստազ է, որի դեմ պայքարը շատ դժվար է, հաճախ նաեւ՝ անհնարին: Մենք նման վիճակի առնչվեցինք, երբ քննության էինք առնում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի մի շարք դրույթների

սահմանադրականության հարցը: Այդ դրույթները մեկ տարվա մեջ մի քանի անգամ փոփոխության էին ենթարկվել՝ հիմնականում վճռաբեկ դատարանի դատական պրակտիկայից ելնելով: Այդ պրակտիկայի հիմքում դրվել է այն հայեցակարգային մոտեցումը, որ մայրցամաքային իրավական համակարգում փոխառնվել է դատական նախադեպի ինստիտուտը՝ առանց համակարգային առանձնահատկությունները խորությամբ հաշվի առնելու: Արդյունքում ունենք մի իրավիճակ, երբ Հայաստանում եռաստիճան դատական համակարգը անցում է կատարում հիմնականում երկաստիճան դատական համակարգի՝ քաղաքացիների համար գրեթե անմատչելի դարձնելով վճռաբեկ բողոքի դատաքննության ինստիտուտը:

Նման իրավիճակում արժեզրկվում է նաև սահմանադրական արդարադատության պրակտիկայում անհատական դիմումների ինստիտուտը: Բանն այն է, որ մեր երկրում դատական ակտերը սահմանադրական վերահսկողության օբյեկտ չեն, ինչպես դա տեղի ունի բազմաթիվ երկրներում: Իր հերթին անձը սահմանադրական դատարան անհատական դիմում կարող է ներկայացնել միայն իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականության հարցով՝ երբ սպառվել են դատական պաշտպանության բոլոր հնարավորությունները: Միաժամանակ, համաձայն Սահմանադրության 3-րդ հոդվածի՝ մարդու եւ քաղաքացու սահմանադրական իրավունքներն անմիջական գործող իրավունքներ են: Իսկ սահմանադրական դատարանի առաքելությունը Սահմանադրության գերակայության եւ անմիջական գործողության ապահովումն է:

Կարծես թե ամեն ինչ ճիշտ է եւ հստակ ձեւակերպված: Սակայն ինչպես վարվել այն դեպքում, երբ անձի սահմանադրական իրավունքը ոտնահարվել է ոչ թե օրենքի նորմի հակասահմանադրական լինելու պատճառով, այլ ոչ հստակ նորմի դատական պրակտիկայի սխալ մեկնաբանման եւ կիրառման պատճառով: Նորմը մեկնաբանել է վճռաբեկ դատարանը, որի ակտը սահմանադրական դատարանում՝ դրա սահմանադրականության առումով, քննության առարկա չէ, իսկ այդ մեկնաբանությունը, որը սահմանադրական իրավունքի ոտնահարման պատճառ է դարձել, իր հերթին դառնում է իրավունքի աղբյուր եւ դրվում է նաև օրենսդրական փոփոխությունների հիմքում: Մասամբ նման վիճակով է պայմանավորված նաև այն հանգամանքը, որ ձեւական բնույթ է ստանում նոր հանգամանքների ինստիտուտը քաղաքացիական դատավարության պրակտիկայում: Քաղաքացիական

դատավարության օրենսգիրքը նախատեսում է, որ նոր հանգամանքները դատական ակտերի վերանայման հիմք են հանդիսանում: Նոր հանգամանքներ են համարվում.

ա) Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի՝ ուժի մեջ մտած որոշումը, որով ամբողջությամբ կամ մի մասով հակասահմանադրական է ճանաչվել այն օրենքը կամ այլ իրավական ակտը, որը կիրառել է դատարանը.

բ) Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած վճիռը կամ որոշումը, որով հիմնավորվել է անձի՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման հանգամանքը:

Փաստական վիճակն այն է, որ վերջին երկու տարվա ընթացքում սահմանադրական դատարանը երեք տասնյակից ավելի քաղաքացիների դիմումների հիման վրա տարբեր օրենքների դրույթներ, որոնք նրանց նկատմամբ կիրառված են եղել դատարանների կողմից, ճանաչել է հակասահմանադրական եւ անվավեր, սակայն նոր հանգամանքներում դատական ակտերի վերանայման արդյունքում կայացվել է դատական նույն ակտը՝ պարզապես չվկայակոչելով հակասահմանադրական ճանաչված նորմը: Քաղաքացին չի ստանում ոչինչ, բացի դատարանների դռները մաշելուց:

Գործնականում ստեղծվում է մի իրավիճակ, որ սահմանադրորեն ամրագրված իրավունքներն ապահովման ու պաշտպանության ավելի թույլ երաշխիքներ ունեն, քան Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով ամրագրված իրավունքները, որոնք պաշտպանություն են գտնում նաեւ Ստրասբուրգում:

Նման պայմաններում Սահմանադրության գերակայության երաշխավորումը դառնում է ոչ իրական ու անարդյունավետ:

Բերված վիճակը վկայում է, որ մենք գործ ունենք նաեւ վերարտադրվող օրենսդրական բացի կամ անորոշության հետ, որը, սակայն, վերարտադրվում է արդեն ձեւախեղված, մուտացված վիճակում, եւ դրա հիմնական պատճառն այն է, որ օրենսդրական բացը հաղթահարվել է ոչ թե դրա սահմանադրականության գնահատման ճանապարհով, այլ ընդհանուր իրավասության դատարանների դատական պրակտիկայի հիման վրա, որի սահմանադրականության գնահատումը դուրս է թողնվել սահմանադրական վերահսկողության ոլորտից:

Մեր խորին համոզմունքն է, որ օրենսդրական բացի հիմնախնդիրը չի կարող քննության առարկա դառնալ միաչափության կամ երկչափության մեջ: Մենք գործ ունենք բազմաչափ վերարտադրվող երեւոյթի հետ, որի հաղթահարումը համակարգային մոտեցում է պահանջում: Դրանում բացառիկ կարեւոր դեր ունի սահմանադրական արդարադատությունը, որի միջոցով է միայն հնարավոր հաղթահարել սահմանադրաիրավական բացը՝ սահմանադրական հիմնարար սկզբունքների ու արժեքների հիման վրա:

Երրորդ հանգամանքը, որի վրա կցանկանայի ձեր ուշադրությունը հրավիրել, վերաբերում է նրան, որ հասարակական հարաբերությունների սահմանադրականացման խորացման ներկա միտումները նույնպես վկայում են, որ իրավունքի բացի հաղթահարման օբյեկտիվ պահանջները լուրջ խնդիրներ են առաջադրում սահմանադրական արդարադատության համակարգային զարգացումներին:

Մենք, մասնավորապես, գործ ունենք “իրավական վակուում”, “իրավակարգավորման անորոշություն”, “օրենսդրական բաց”, “սահմանադրաիրավական բաց” կամ “սահմանադրական արժեքների ու սկզբունքների ոչ համարժեք իրացում օրինաստեղծ գործունեության մեջ”, “իրավական ակտերի մեկնաբանման արդյունքում ստեղծված իրավական բաց կամ դատական պրակտիկայի կողմից ստեղծված իրավական բաց” հասկացությունների հետ, որոնք պարտադիր կարգով պետք է սահմանադրական վերահսկողության առարկա լինեն այնքանով, որքանով այդպիսին են այն իրավական ակտերը, որոնց առնչվում են այդ բացերը: Շատ երկրներում ընդհուպ Սահմանադրությունը, հատկապես դրա փոփոխությունները, նույնպես սահմանադրական վերահսկողության օբյեկտ են: Սահմանադրության ինքնաբավության դոկտրինան հենց հենվում է այն հայեցակարգի վրա, որ սահմանադրական նորմերի մեկնաբանման հիմքում դրվում են սահմանադրական հիմնարար արժեքներն ու սկզբունքները: Հետեւաբար, սահմանադրական դատարանը պարտավոր է իրավանորմի սահմանադրականությունը գնահատել՝ իրավակիրառական պրակտիկայի կողմից դրան տրված բովանդակությամբ հանդերձ, ինչն ընդունված է նաեւ մեր դատարանի դատական պրակտիկայում: Այդ

հարցում, մեր կարծիքով, հետաքրքիր փորձ է կուտակել նաև Ռուսաստանի
Դաշնության սահմանադրական դատարանը:

Ամփոփելով, ցանկանում եմ կրկին շեշտել, որ իրավական բացն իր բնույթով
սահմանադրաիրավական դաշտի սովերոտ դրսևորում է, որը կարող է
հաղթահարվել միայն Սահմանադրության լույսի ներքո: Իսկ Սահմանադրության
լույսով նման խավարը ցրելու հիմնական առաքելությունը վերապահված է հենց
սահմանադրական դատարաններին:

Շնորհակալություն ուշադրության համար: